Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-887-29.04.2010-ԱՄ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՄԱՐԴՈՒ ԻՄՈՒՆԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԻՐՈՒՍԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1 «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության /1997 թվականի փետրվարի 3-ի ՀՕ-103/ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասում «Հայաստանի Հանրապետության կառավարության» բառերը փոխարինել «պետական լիազորված մարմնի» բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ արված առարկության մասին

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «/1997 թվականի փետրվարի 3-ի ՀՕ-103/» բառերը, համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի պահանջի:	Առաջարկությունն ընդունվել է:	Իրավական ակտի նախագծում «Հայաստանի Հանրպետության» բառերից հետո լրացվել է նշած օրենքի նախագծի ընդունման տարին, ամիս, ամսաթիվը և համարը: